

H. PALAKACHIAN, Directeur - Rédacteur
de la Revue Hebdomad. „MÉGHOU„
171, Rue Kabristan, Péra, CONSTANTINOPLE

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՊՐԱՆԻԹԻՒՆ

Փոստովան՝ տարեկան 250, վեցամսեայ 125 դր:
Եւրոպայ՝ — 60 ֆրանք.
Ամերիկայ՝ — 3 Զոլար.

مَكْفُوف

صاحب و مدير مسئولی هوونان پالاقاشيان

استانبول بك اوغلى قبرستان سوقاق تومرو ۱۸۱

Ursoliansky, նմապիր եւ Պասապի. Տերեւն՝

Յ. Գ. ՓԱԼԱԳԱՇԵԱՆ

Կ.ՊՈԼԻՍ, Բեռն, Գապիլիսան փողոց, թիւ 171

Ա. ՏԱՐԻ

Թիւ 8

— ❖ —

1927

ՅՈՒԼԻՍ 21

Հասր 5 դրու.



ՆԱԽՆՈՒՑՈՒՄ

Տպը 10 դրու.

Չսպառած գումարիս
թիւսիս չեն վերադարձուիլ:

— ❖ —

Հասր 5 դրու.

Կը հրատարակուի ՀԻՆԳՇԱԲԹԻ օրերը

ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏԻ

ԴՐԱՄՆ ԱԼ ԿՈՒՏԵՆ

Այս ո՛րքան զեղծում, կը հարցնէինք « ՄԵՂՈՒ » ի վերջին քուտ, եւ յառաջ կը բերէինք Պարգեւ վրդ.ի Կսակագրամին ողբերգութիւնը:

Նորէն կ'ըսենք. այս ո՛րքան զեղծում: Ահառասիկ ուրիշ ողբերգութիւն մ'եւս, զոր երեւան կը հանէ ժամանակ:

Երաժշտագէտ Կովսաս վրդ.ի ողբալի կացութիւնը յայտնի է ամենուրեք: Ասկէ առաջ, անոր ապրուստը եւ դարմանումի ծախքերը հոգացուելու համար, բարեսէր ազգայիններու մէջ 800 ոսկոյ չափ գումար մը կը հանգանակուի եւ կը յանձնուի Պատրիարքարան: Ի՞նչ կ'ուզէք որ ըլլայ այս գումարը: Մտադ չը գիտեք թէ ի՞նչ կ'ըլլայ: Միայն սա յայտնի է, թէ երկայն ատեն այդ գումարէն տասնոց չը դրկուիր Կովսաս վրդ.ին: Անցեալ տարի միայն, Գուման վրդ.ի դիմումներուն շնորհիւ, հազիւ կարելի կ'ըլլայ այդ 800 ոսկիէն 200 ը խաղըսել եւ դրկել այն Յանձնաժողովին որ Բարիզի մէջ կազմուած է՝ Կովսաս վրդ.ի վիճակով զբաղելու համար: Մնացած 600 ոսկիին համար կ'ըսուի հիշնա թէ, Պատրիարքարանը ծախած է « տարբեր նպատակներու »:

Ի՞նչ են այդ տարբեր նպատակները, Ազգը գիտնալ կ'ուզէ: Ենթադրենք թէ ասոր կամ անոր կոկորդին մէջ չէ հալած այդ գումարը, եւ իրօք «տարբեր նպատակներու» գործածուած ըլլայ: Այդ «տարբեր նպատակներն» ի՞նչ ալ ըլլան, երբէք չեն կրնար արդարանալ անոնք որ որ եւ է նուիրաստութիւն կամ կտակ կը շնորհեցնեն իր նպատակէն կամ նուիրաստին կամէն. մանաւանդ թէ Կովսաս վրդ.ի նման հազուագիտ տաղանդ մը զրկել իր ապրուստին եւ դարմանումին յասկացուած գումարէ մը, անզգայութեան եւ անխղճութեան ծայրագոյն սասիմանն է. արարք մ'որ պըծգանք եւ զայրոյթ միայն կրնայ ազդել սմէն զգայուն արտի:

Ահառասիկ քննութեան ենթարկուելիք խնդիր մ'ալ: Քննիչ Յանձնաժողովը պէ՛տք է այս խնդրով ալ զբաղի, եւ համարութիւնը պէ՛տք է իմանայ թէ որո՞նց կոկորդին անցած է խեղճ Կովսաս վրդ.ի հացին եւ դեղին դրամը:

«Տարբեր նպատակ» ըսելով չեն կարող արդարանալ: «Տարբեր նպատակ» ի գործածեցինք ըսելը, պարզապէս՝ Կովսաս վրդ.ին քարան կե-

րանք ըսել է: Ուրեմն, որո՞նք կոկորդին անցած է Կովսաս վրդ.ին դրամը, պէ՛տք է զննուի ասիկայ եւ դրամները յետ պահանջուին, եւ այսպիսի արարքներու հեղինակներն ալ պէ՛տք է անարգութեան սխալին գտնուին: Եթէ ասիկայ չընեն, իրաւունք տաւոք պիտի ըլլան հանրութեան որ այդ եւս հինգ փարս չը վստահի Պատրիարքարանի, որ ո՛չ կը մահաբազուծուի եւ ո՛չ ալ կը կրօնահալ:

Յ. Գ. Փ.

ԶԱՐՈՒԹԵՆԷՆ ԶԱՆՈՅՔ ԶԳԱՅՈՂ ՆԵՐ՝

Գաւապար Չերազ Էմէնէսի արգահատելի վիճակը պարզած էինք ասկէ առաջ եւ կոչ ըրած էինք բարեսէր ազգայիններու՝ օգնութեան ձեռք կարկառել անոր եւ մխիթարել զինքը իր այս ծերութեան օրերուն մէջ, որպէս զի ինքզինքը բոլորովին լիւրած չը գգայ եւ կարելի եղածին չափ նուազ տառապի:

Եւ անա՛ մէջ կը նետուի նոր Լուր, եւ ուզելով խափանել բարի գործ մը, կը ծանուցանէ թէ, Գաւապար Չերազ օժանդակութեան պէ՛տք չունի, վասն զի իր քննանեկան պարագայները լի ու լի կը հոգան անոր ամէն պէ՛տքերը, եւայն, եւ թէ Փալազաշեան ուրիշներու քննանեկան գործերուն խառնուած կ'ըլլայ եղեր՝ Դ. Չերազի վրայ հանրային հոգածութիւն հրաւիրելով:

Ընթերցողները կը յիշեն թէ մենք

այս նպատակաւոր գրութիւն հարկ եղած պատասխանը տրինք ՄԵՂՈՒԻ Երկ քուով, եւ այս առթիւ ըսինք նաեւ թէ Գառապար էժ իր պատասխանս կօշիկին տեղ նոր կօշիկ մը հազած էր շաքարով, եւ այս կօշիկէն զատ ուրիշ որ եւ է փոփոխութիւն չի տեսնուիր իր վիճակին խեղութեանը մէջ: Մենք այնպէս կարծած էինք թէ ընկալնական պարագայները գնած ու հազցուցած էին այդ կօշիկը, եւ այդպէս ալ գրած էինք: Բայց Գառապար էժ փութաց խմբագրասուն եւ բողոքեց մեր այդ սխալին դէմ, յայտարարելով թէ ինքը չորս ոսկիի խնայողութիւն մ'ունէր մասուկի պէս պահած, անով գնած էր կօշիկը, եւ հիմա հինգ փարան չէր մնացած: Խեղճ մարդն երէկ պարտեալ եկաւ մեզ մօտ եւ լալով պատմեց թէ, քանի որ է վեր կտուր մը վարուցով շէր մը ցաւաք հաց կ'ուէր ու կը պառկէր գիշերները, իսկ «այս գիշեր անօրի պառկեցայ, ըսաւ, եւ այսօր ալ մինչեւ այս վայրկեանս բերանս բան մը չեմ դրած, գրպանս ալ սա տար փարանցը միայն մնացած է»:

— Բայց, Գառապար էժէնքի, նոր Լորր գրած էր թէ զուգ ամէն տեսակ խնամք կը վայելէք ձեր ընկանքին մէջ, ձեր ամէն պէտքերը լի ու լի կը հոգացուին, եւ թէ արտաքին օժանդակութեան բնաւ պէտք չունիք եղեր:

— Այդ ըսողներն ու գրողները խաղաղ են ըլլեր. անոնք ինքի թեմամբ եւ անոնք անօրի մեռելիս կ'ուզեն . . .

Եւ սկսաւ նորէն լալ . . .

Հիմա, այս տեսարանին առջեւ, մարդ եղիք, սիրտ ունեցէ՛ք, մի՛ յուզուիք՝ եւ մի՛ գրէք:

Գրեցիք: Ուրիշներու ընկանքական գործերուն խառնուեցաք: Ածուածը սիրեա, ընկանքական գործը ո՛րն է այս տեղ: Մեր դիմաց զարգացած եւ օր տեսած մարդ մը կայ որ անօրի է եւ կուրայ. մարդ մ'որ հանրութեան օգտին ալ ծառայած է, կարեւոր պատճեններ ալ վարած է, եւ հիմա կ'ամբարշտեցի ինքի գուռը կենալու եւ մուրալու: Հազիւ կը համարձակի մէկ երկու որոցաւ բարեկամներու իր ցաւը լալու: Ասանկ մէկու մը վիճակին վրայ գրաւը եւ զանկայ հանրային ուշադրութեան եւ հոգածու-

թեան տարեկայ ընել ուզելը՝ անոր ընկանքական գործերուն խառնուիլ կը նշանակէ: Տրամաբանութիւն կա՞յ, խել կա՞յ, սիրտ կա՞յ այս խօսքին մէջ: Անուշտ չկայ: Բայց բան մը կայ որ տարակոյս չի վերցնէր. չարամքիւնն եւ չարակամութիւնն է այն: Կ'ուզեն որ որ եւ է օգնութիւն չըլլայ Գառապար էժ. ի եւ մարդը անօրի մեռնի: Կեցցե՛ն Պ. Նոր Լորր: Զգացումներու ազնուութեանը իրաւոր ըսելիք չկայ: Զ.Գ.Փ.

ՍԵՄԻՍՏՐԻ Որբանոցի խնամակալութիւնը, իր այնքան խղճամբաւ եւ արդիւնաւոր պաշտօնավարութեան յետոյ, հրաժարած էր վերջերս: Ուրախ ենք լսելով որ Քաղաք. Ժողովը նոյն մարմինը վերահաստատել է իր պաշտօնին մէջ, գնահատելով անոր մարդասիրական ծառայութիւնները: Ահա ասիկա՝ ասանց յետին միջոցներով մի միայն զազաւարքին նուիրուած ՕՐԻՆԱԿԵԼԻ խնամակալութիւն մը, զոր կ'արժէ քաջալերել բարու յայտն եւ նիւթապէս: Խնամակալութեան Առնապատէ յարգելի Տօք. Կարապետ էժ. Պետրոսեանի եւ իր ազնիւ ընկերներուն անձայն անշուշտ աշխատանքն իրաւամբ իրենց գրուած են ժողովուրդին գնահատուած եւ որբերուն ալ երախտագիտութիւնը:

ՍԵՄԻՍՏՐԻ Հայոց եկեղեցին, տասնեակ տարի մ'առաջ, նոյն ատենի Թագ. Խորհրդոյ կողմանէ քանոնաւ կերպով ծախուել է պուլկար Սինդիկին, բայց էջմիածինը չէ վաւերացուցեր այս վաճառումը, եւ խընդիրը մնացել է առկա: Այժմ կառավարութիւնը հրամայել է եկեղեցին իրեն յանձնել: Յանձնաւորումը մը կազմուել է, խնդիրը քննուել եւ հարկ եղած գիտումներն ընկու համար:

Ս. ՊԵՏՐՈՍԻՍՏՐԻ Հարթուս Հիւանդանոց այցելութեան ատիւ երեւան ելել է Հանգիւծատան գոյքերու արձանագրութեան տեսարանին անհետացումը, որուն հետեւանքով գոյքերու քանակութիւնը կը մնայ անյայտ:

ՈՒՍՈՒՑԻՉ Եւ Մանկապարտիզպանուհի հասցնելու միջոցներն ուսումնասիրելու պաշտօնով Յանձնաժողով մը կազմուեցաւ Տ. Գար. Կաթ. Խաչատուրեանի նախագահութեամբ:

76 ՊԵՏՐՈՍԻՍՏՐԻԱՆԵՐՈՎ ամբողջ Ամերիկայի մարդկիւններուն մէջ առաջինը հանգիստացած է Եօզղատի Ստաթլը դիւղէն 15 տարեկան Հայ պատանի մը՝ Ռօստօֆ Յովսէփեան, որ կը պատկանի Պօսթլընի Սքաւթներու 21րդ խումբին եւ արժանացած է Արի Արծի տիպաւորին:

ՆՈՐԸՆԾԱՅ Տ. Յովհ. Քն. Ամերեկ, որ ի մօտոյ Պուլկուս Այրէս պիտի մեկնի իբրեւ հոգեւոր հովիտ տեղւոյն Հայութեան, Ուր. առաւօտ Գուգիւնեանքի Ա. Լուսաւորիչ եկեղեցւոյն մէջ պատարագեց եւ քարոզեց, նիւթ ունենալով «Ամերեկը գմբեման»:

ԻՆՉ ՊԵՏԲ Ե ԸՆԵԼ ՄԻՆՉԵԻ ԲԺՇԿԻՆ ԳԱԼԸ

ԸՆԿԱՄՈՒՄԻ ՊԱՐԱԴԱՅԻՆ

Ո՛րչափ խեղդուածներ մեռած են, աւոր համար որ իրենց քով հմուտ մարդիկ չեն գտնուած: Արագ օգնութիւնն ամեն հակարեւորն է: Եւ պէտք է գիտնալ նաեւ թէ ի՞նչ բնեւոր է:

Նախ, խեղդուածը պատկեցուցէ՛ք աջ կողմին վրայ, եւ շնչերակն խողովակներէն ջուրին դուրս պարպուիլը դիւրացրէ՛ք: Համար, գլուխը քիչ մը աւելի ցած ըլլալու է քան թէ մարմինը. բայց մահաւանդ զինքը քանի մ'երկվայրկեանն աւելի մի՛ պահէք այս դիրքին մէջ: Լորձահիւթերուն դուրս պարպուելն յետոյ, խեղդուածը կոնակի վրայ պառկեցուցէ՛ք եւ տաքցուցէ՛ք: Տաք ծածկոցներու մէջ փաթկեցէ՛ք, եթէ կարելի է. իսկ եթէ տուէ՛ հետեւ կը գտնուիք, ծածկեցէ՛ք զայն ձեր հագուածներով, ձեր արամաղրութեան տակ գտնուած որ եւ է բռնով, աւորք եթէ տաքութիւն ալ չի կրնան տալ, գոնէ ցուրտը կ'արգիլեն: Ատեն ատեն բերանը հայեցէ՛ք, եւ եթէ նոր լորձահիւթեր կան, ձեր մատով դուրս հանեցէ՛ք:

Արհեստական կերպով շունչ տուէ՛ք: Ետ դիւրին է: Հիւանդին գլխին կողմնանցէ՛ք եւ իր թեւերը ձեր ձեռքերուն մէջ բռնեցէ՛ք, արմուկներուն բարձրութեամբ: Չանոնք կամաց մը դէպ ի ձեզի քաշեցէ՛ք, մէկգմէկէ հեռացնելով: Տարածեցէ՛ք զանոնք երկու երկվայրկեան, յետոյ ամբողջութեամբ վեր բարձրացուցէ՛ք, կուրծքը կողմնակի ճնշելով: Թեւերը բարձրացրէ՛ք, կուրծքին մէջ կարելի եղածին չափ շատ օդ կը մտցնէք, եւ վար իջեցնելով՝ թոքերուն մէջ կուտակուած օդը դուրս կը հանէք: Միւսայն ատեն, եթէ օդնական մ'ունիք, հիւանդին լեզուն բռնել տուէ՛ք լաթով մը, որպէս զի չի սափ, եւ քաշել տուէ՛ք զայն զգուշաւորութեամբ: Ուրիշ օդնական մը մեղմիւ պիտի չփնտքերուն գարշապարը (քաւարն), ձեռքերուն տիր:

Մէկ խօսքով, խեղդուածը տաքցնել, կլլած ջուրը եւ լորձահիւթերը բերնէն դուրս վազցնել, անդամներուն ծայրերը չփել, արուեստական շունչ տալ եւ լեզուն զգուշաւորութեամբ քաշել. ահա՛ ասոնք են տրուելիք առաջին պայմանները:

Եթէ խղճուածն ուշաբերի, կամ քանի մ'անգամ ներշնչել խորունկ կերպով, ձեր ջանքերը կրկնապատկեցէ՛ք: Պէտք է անվատ գոնէ ժամ մը աշխատել, մինչեւ հասնիլը բժշկին, որ այնուհետեւ կը շարունակէ զարմանումը:

ԿԱՆԱՅԻՈՒԹԵԱՆ ԽՆԴՐՈՅ ԱՌԹԻՒ ՄԻ ՔԱՆԻ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՒՍ

Մայրաքաղաքներու փողոցներուն մէջ յաճախ կը սրտառնիք տարօրինակ հազուադէպով մարդիկ որոնք՝ իրենց գլխէն վեր բռնած ծանուցումներ պարունակող տախտակներ՝ մանկուղան, իրենց վրայ հրաւիրելով անցորդներու ուշադրութիւնը :

Լոնտոնայի և Բարիզի մէջ միանգամայն, գաղափարը յղացուեցաւ այս պաշտօնին համար կիներն օգտագործելու : Անգլիոյ մէջ, 1907 Սեպտեմբերին, այս գործին առաջին անգամ ձեռնարկեց Օր. Թէրիա Լէսէլս : Նոյն տարուոյ Հոկտեմբերին, թէյի ծանուցում մը կրող կիներու շարք մը կ'անցնէր Բարիզի փողոցներէն :

Փրանսայի մէջ, պատի ծանուցումներ փակցնող առաջին կիներ երեւցաւ 1908 Սեպտ. ին :

Առաջին անգամ Ամերիկայի մէջ էր որ Օր. Մէրի Մօնի անուն կին մը ձիարշաւի մասնակցեցաւ և արժանացաւ 28 մրցանակներու և 14 արձաթ բաժակներու : 1907 ին Փրանսա եկաւ, բայց չը թոյլատրուեցաւ որ ձիարշաւներու մասնակցի :

Երկու տարի առաջ միեւնոյն ընդդիմութեան հանդիպեցաւ Փաննի Հէլտի, Օբերայի սիրուն գերասանահիներէն, որ կ'ուզէր իր մասնակցութիւնը բերել ձիարշաւներու մրցումներուն :

1908 ին Նիու Եօրքի մէջ առաջին աստիկանուհին եղաւ Օր. Եւա Փայօն, որ մասնաւորապէս ստանձնած էր ինքնաշարժերու հսկողութիւնը : Ուրիշ մանկամարդ կիներ ալ իր օրինակին հետեւեցան հետզհետէ : Լոնտոնայի մէջ, աւելի յետոյ, կազմուեցաւ կին աստիկաններու ջոկատ մը, որոնք լիովին արդարացուցին իրենց վրաստանած պաշտօնը : Փրանսայի մէջ կին աստիկան չի կայ տակաւին :

Ճանրմարքայի մէջ է որ առաջին անգամ տեսնուեցաւ նաւու մը հրամանատարութիւնն ստանձնող կին մը : 1914 Մայիսին էր : Այս կինը, Տիկ. Պոտից, գանիական ծովակալու

թեան բժիշկներէն միոյն ամուսինն էր, և այս հանգամանքով՝ իր ամուսնոյն կը հետեւէր իր ուղեւորութեանց մէջ : Քիչ քիչ, այնչափ սիրահարուեցաւ ծովային գործերու որ, Քօբէնհակի Առևտրական նաւային Վարժարանին մէջ արձանագրել տուաւ ինքզինքը, նաւարկութեան ամբողջ դասընթացը մը բոլորեց և վկայական ստացաւ :

1912 ին, Պափիէրայի սպորտափաճառի մը կինը, Տիկ. Քէթի Լիթլիշ, մտադործ վարպետի տիտղոսն ստանալու համար քննութիւն անցուց յատկապէս կազմուած Գանձնաժողովի մը առջեւ : Նախ եղ մը զգեստեց և սպաննեց տարօրինակ ճարպիկութեամբ մը. յետոյ, ո՛չ նուազ վարպետութեամբ, մահացուց խոզ մը և հորթ մը : Յետոյ, իր զոհերը մորթեց՝ արհեստին կանոններուն համաձայն : Գանձնաժողովը, սքանչացած, թեկնածու կնոջ իսկոյն շնորհեց խնդրուած տիտղոսը :

1908 ին, Գերմանիոյ Պէանպուրկ քաղաքին մէջ, 18 ամեայ Օր. Լամա Սօնթալ, պայտարի գործանոց մը բացաւ : Կ'ըսուի թէ հաւատարմ ճարտարութեամբ կը պայտէր որչափ ձի մը, նոյնքան եղ մը :

ԱՐՇԵՍ ԲՄՊԵԼԻՆԵՐ ՊԱՏՐԱՍՏԵԼՈՒ

Անիսոնի բմպելի (creme d'anis). — 25 կրամ անիսոնի հուստ ամբողջ շաքարի մը թրջոց գրէք լիտր մը ալքոլի մէջ, լաթէ մը անցուցէք, յետոյ վրան աւելցուցէք օշարակ մը՝ որ բաղկացած ըլլայ լիտր մը տաք ջուրի մէջ լուծուած քիւօ մը շաքարէ : Այս վիճակին մէջ կը թողուք քանի մը օր, յետոյ պարզուեալ կ'անցընէք, եթէ պէտք տեսնէք :

Գեղին Կարթուսոյի (chartreuse). — Գեղին կարթուսոյի (շարքոեոգ) նմանութիւն մը կը պատրաստուի հետեւեալ կերպով.

- 2 լիտր ալքոլի մէջ պէտք է թրջոց գնել
- 4 կրամ բադիան (չինական անիսոն, anis étoilé, badiane).
- 3 » խմիի արմատ (racine d'angelique, մեղայիթ օրն).
- 2 » ճագուսի հուստ (semence de carvi. գարախակ ֆիսկոն).
- 4 » սագիանի հուստ (semence de fenouil, րեզիլէ)
- 4 » քրքում (սափրակ) :

Երկու կամ երեք օր յետոյ, հեղուկը կը զտուին դիրտէն, այսինքն խառնուած նիւթերու միացորդներէն, և կը քաղցրացնեն զայն օշարակի մը խառնուրդով որ պէտք է բաղկացած ըլլայ 1 քիւօ շաքարէ, 2 լիտր ըլլալու համար բաւականաչափ ջուրի մէջ լուծուած :

ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԻ ԴԱՍ ՄԸ

Հանգուցեալ Մարգար Միրզա կտակ բրած էր տարիներ առաջ, որուն համաձայն իր հարստութեան հասցիքին մէկ մասը տարուէ տարի պիտի յատկացուէր Իզմիրի Հայոց եկեղեցիին, Որբանոցին, Հիւանդանոցին և Մեարդեան վարժարանին :

Անցեալ տարի, հանգուցեալին քոյրը Տիկ. Մաթի Որբերեան Բարկոյրծ. Միւսթիւն յանձնած էր այդ կտակին հասցիքները մինչև 1925, որ 66,729 Փոտիքի կը հասնէր, խնդրելով որ այդ գումար յատկացուի Գանատան գանտաղ Իզմիրի որբերու, աղքատ ուսանողներու, չքաւոր ուսուցիչներու, կարօտ եկեղեցականներու և հիւանդներու պէտքերուն :

Ըստ այսմ, Բարեկոյրծ. Միւսթիւնը տղնիւ տիկնոջ սոյն փափաղը գործադրած է Աթէնքի Տիկնանց Գանձնախումբին միջոցաւ, հետեւեալ կերպով. 32 Իզմիրի ուսուցչուհիներ և ուսուցիչներ ստացած են 17,964 տրախմի, 24 Իզմիրի քահանայներ և անոնց պարագայները ստացած են 19,800 տրախմի, 81 Իզմիրի որբերու և որբուհիներու համար ծախսուած է 26,200 տրախմի, 148 Իզմիրի հիւանդներու և կարօտներու համար ծախսուած է 34,375 տրախմի :

Այս գումարներէն զատ հիւանդներու և աղաքոց բաժնուած են զանազան սննդեղէններ : Տիկնանց Գանձնախումբին մօտ տակաւին 45,700 տրախմի տրամադրելի մնացած ըլլալով, Տիկ. Որբերեան հրահանգ տուած է այդ գումար յատկացնել Իզմիրի հիւանդ կիներու պէտքերուն :

Թո՛ղ մեր Ազգ. Պատրիարքարանը տեսնէ ու սովորի թէ, կտակ մը կամ նուիրատուութիւն մը ինչպէս կրնայ եղեր յարգուիլ ու գործադրուիլ :

ԺԱՍԱՆՑԻ ԲԱԺԻՆԸ

Տպագրիչ մը, յուղարկաւորութեան մ'առթիւ, ապսպրանք կ'ընդունի ժապաւէնի վրայ տողագրելու սա ուղեբժր. Հանգչե՛ք՝ խաղաղութեան մեջ : Ցտեսութիւն : Ժամ մը վերջ, յաճախորդը կը հեռադէր տալագրիչին. Կը խնդրեմ արեւցնել « յերկին », եթէ ստիպիլն տեղ կայ :

Յաջորդ օրը, յուղարկաւորութեան պահուն, ներկայները ժապաւէնին վրայ կը կարդային հետեւեալը. Հանգչե՛ք՝ խաղաղութեան մեջ. Ցտեսութիւն յերկին, եթէ ստիպիլն տեղ կայ :

Մեծ-Շուկայի մէջ ՄԵՂՈՒԻ բաժանորդներէն կը խնդրուի իրենց բաժնեգիրք յանձնել Ոսկերիչ Նաչիտ էֆ. Արշարունիի, Մուհաֆազաճըլար փողոց թիւ 8-10 :

ԱՆՏՈՒՆԷ ՏԸ ՊՈՒԷՎԻԼ

ՆՈՐԱՎԷՊ

ՅԵՏ ՄԱՀՈՒ ՓԱՌՔԸ

Ո՛րքան գեղեցիկ է, է՛տուտ, նուազած այդ կտորը: Երբէ՛ք այդքան հրաշալի բան մը չէիր հեղինակած կարծեմ, և կարելի չէ չյուզուիլ, յարեց Լիւսի, որքեղով իր գեղեցիկ աչերը, որոց մէջ արցունքի մի քանի կաթիլներ կը փայլէին:

Մինչ երիտասարդը, որ ժամացոյցը նա յաճ ըլլալով աճապարանօք կը գոցէր դաշնակը, ձեռքի նշանով մը յայտնելով թէ՛ հազիւ միջոց ունէր գրասենեակ վաղելու, երիտասարդ աղջիկը շարունակեց, ցոյց տալով քովի սենեակին դուռը.

—Այս երեկոյ եթէ երբէք բժիշկը արտօնէ, այս կտորը պիտի նուագես մայրիկին: Վստահ եմ թէ՛ նա ևս պիտի արտատուէ ինձ նման:

Տիկ. Տ... , տարիէ մը ի վեր ծանր հիւանդութենէ մը կը տառապէր և մեծածախս խնամքներու կը կարօտէր, մինչ տրամական շատ նեղ կացութեան մը մէջ կը գտնուէին իրենք:

Իր աղջիկը, Լիւսի, որ Սթէնօ-Տարթիլօի պաշտօն մ'ունէր, պարտաւորուած էր թաղուլ իր այդ պաշտօնը, խնամելու համար իր մայրը, և իր ազան, էտուտ, որ վաճառատան մը մէջ օգնական-հաշուակալ էր, ստիպուած էր այժմ առանձինն հոգալ իրենց ապրուստը:

Արդ, տարաբախտ երիտասարդը, թիւերու հետ ընտել հասնէր, և անխնայ աշխատութեան և յարատեւութեան շնորհիւ էր որ միայն կը յաջողէր լաւ կտտութիւ իր այդ պաշտօնը: Իր շատ թարմ հասակէն իսկ կարի սիրած ըլլալով նուազը, երգած էր իր դիւղի եկեղեցւոյն մէջ, և ծերունի երգիտնաբերին բարեկամութիւնը շահած ըլլալով, ձայնագրութեան ստալին ծանօթութիւններն ստացած էր անկէ:

Յետոյ, վարպետներու գրած գրքերէն ինքնօգնութեամբ ուսած էր դաշնակութեան պայմանները և երգագրութիւնը, զոհանալով միայն երբեմն խորհուրդ հարցրելով բարեկամներու, որոնք՝ իրմէ աւելի բախտաւոր Քօնսէրվաթուառ կը յաւճախէին և կամ անուանի վարպետներու հետ կ'աշխատէին: Վստի գի, ստիպուած ըլլալով շահիլ իր և իրեններուն ապրուստը, իր նախընտրած արուեստին կը նըւիրուէր մի միայն երեկոյն, իր դրասենեակէ վերադարձին:

Երկար ժամանակէ ի վեր նա կը խորհէր մեծ գործքի մը, թատերադրութեան մը վրայ, որուն ծրագիրը յորինած էր արդէն, բայց ձայնագրելէ առաջ սպառած էր, որպէս զի կատարելապէս վստահ ըլլար իր

միջոցներուն վրայ: Այն միջոցին նա աշխատեցաւ անդուլ, տենդալին, նոյն իսկ առանց խորհելու թէ կարող էր վնասել իր արդէն իսկ ակար առողջութեան: Եւ գործերը կը յառաջանար, երբ Տիկ. Տ... ծանր կերպով հիւանդացաւ: Զրկուելով իր քրոջ օգնութենէն որ այդ ևս չէր կարող օժանդակել տանը ծախքերուն, էտուտ պարտապարտեցաւ յաւելումովան ժամեր ևս աշխատիլ:

Շատ հազուադէպ էր որ կէս գիշերէն առաջ տուն վերադառնար, և յաճախ թէպէտ յոգնութենէ պարտաւոր, փափաքելով թուղթին վրայ նօթադրել եղանակ մը որ ծածկուէր ընթացքին պատրաստած էր իր մտքին մէջ, չէր կարող զիմարել դաշնակը բանալու իր փափաքին: Եւ երբ կ'երթար վերջապէս նետուիլ անկողնոյն վրայ, դէմքը աճառէր, աչքերը տենդաւառ, արշալոյսը չէր ուշանար ծագելէ:

Որքան որ երիտասարդը իր շահած դրամը ամբողջովին կը յանձնէր իր քրոջը, այս վերջինը չուզելով վրդովել զինք, իրմէ ծածկեց մի քանի պարաքեր զոր պարտաւորուած էր ընել՝ մօրը պէտք եղած խնամքը տալու համար: Բայց երբ այդ պարաքերը զիջուեցան, խեղճեղ, խեղճ աղջիկը վերջապէս որոշեց ճշմարտութիւնը խոստովանիլ:

Շատ ծանր հարուած մը եղաւ այս էտուտի համար. ինչ կարող էր ընել աւելին չահելու համար: Միթէ ամէն օր երեք չորս ժամ աւելի չէ՞ր աշխատեր արդէն:

Յանկարծ, իր ակնարկը ինկաւ իր դաշնակին վրայ, երկար տարիներու խնայողութեան պտուղը, ուր իր մասններուն ներքե, նա երբեք տուած էր իր բոլոր մեղեցիկները: Այո՛, ծախել զայն, խորհեցաւ. իր պէտք ունեցած գրամը գտնելու միակ միջոցն այս էր:

Բայց ինչ մեծ զոհողութիւն: Այն միակ մտածումը թէ, պիտի զրկուէր իր այս սիրելի գործիքէն որ ա՛յնքան անմոռանալի ժամեր ապրեցուցած էր զինք, արցունքներ կը հոսեցնէր իր աչքերէն:

Սակայն, բրովնտե քոյրը անձկալի կը դիտէր զինք, ընդհուպ ակնարկը դարձուց իր դաշնակէն, վախնալով որ մի՛ գուցէ նա կը գուշակէր իր մտածումը:

— Մեր նեղուած ըլլալը մայրիկին չը յայտնեցիր, չէ՞, հարցուց:

Եւ երբ Լիւսի այս հարցումը լսելով, զարմանքի շարժում մը կ'ընէր, երիտասարդը հանգարտեցուց զինք, հասկցնելով իրեն թէ այդ դրամը գտնելու համար պտուարութեան չպիտի մատնուի:

Յաջորդ օրը, արդէն իսկ գտած էր գնորդ մը, և իր քրոջ մէկ բացակայութենէն օգտուելով, անշուկ փոխադրել տուաւ դաշնակը, ուշադրութիւնը չգրաւելու համար իր մօրը որ քովի սենեակը պառկած էր:

(Մեացոյրը յաջորդ թիւով)

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Քանի մը ցիրուցան տալանագիրեր վեցեցիկեան Միլիթարեան Հայրերու

Ո 4
Վ Ա

ՀԱՅՐ ՅԱԿՈԲՈՍ ՄԵԹԱՐԵԱՆ

ՎԱՐԴԱՊԵՏ ՄԵԹ ՏԱՆՆ ԶԱՄՉԵԱՆ (1)

Ազնիւ ողիւյզ իմաստութեան և ծոյլ հասից ըզգաստութեան, Ոսկիափայլ փուլ յոբելեան, Բանին կենաց ճախարարութեան. Հայրերաստ աշխատութեան. Յոգնավասակ արիւրեան. Սա հեղինակ Օրագրութեան, Ազգիս մերոյ Աստուածատան. Քաջ չափաբեր երկնից շարժման, Տօմարագէս բացոյցեան. Ուրսունեբեք ամ լիւրեան Մալկեալ յիւրում կենդանութեան, Փոխի յասեաց յերկնից կայան Յճալ ի լոյս արեւոյրեան:

1805 Օգոստոս

(1) Հ. Յակոբոս երէց եղբայրն էր պատմաբան Չամչեան Հ. Միքայէլ վարդապետի: Սա ինքն առաջինն եղաւ ազգիս մէջ յօրինողն Օրագրոյցի 1757 ին: Այս Օրագրոյց յետոյ իբր վաղափար ծառայեց ուրիշ Օրագրոյցներու: Վարդապետս ունի անտիպ հատուկութիւն թերտա գրուածներ պատմական, ժամանակագրական և առաջաբանական, որոնք ընդհանրապէս դանազան տեղեկութիւններ են՝ կարեւոր Օրագրոյցի չինութեան:

Հ. ԵՓՐԵՄ Ծ. Վ. ԱՊՐՈՅՅԱՆ

Վերապակ. — ՄԵՂՈՒԻ նախորդ թուոյն մէջ, Ռ. Կ. Վ. Ա. պէտք է ըլլայ Ռ. Կ. Վ. Ա. նոյնպէս Պոռթախաւսեր պէտք է կարգադրուի Պոռթախաւսն:

ԻՆՉ ԲԱՆԻ ՄԷՉ ԿԸ ԳՏՆԷՔ

ԵՐԶԱՆԿՈՒԹԻՒՆԸ

Տգէտ կին մ'եմ. Երայ տախիայ չար գիւր ինձ խորհելու թէ, երջանկութիւնը ոսկի ունենալուն և անով ձեռք բերուած վայելքներուն մէջ չէ: Խեղճ մայր մը կը ծանչնամ, որուն գրամը չէ որ կը պակի և որ իր բոլոր գաւակներուն մասը տուած է: Կրնա՞յ երբէք երջանիկ ըլլալ ան: Երջանկութիւնը կը կարծեմ թէ կատարուած պարտականութեան մէջ է: Երբ երեկոյն, պառկելու ատեն, հանգստանալէ առաջ, կրնանք բան. «Այսօր չարիք չը գործեցի, ո՛չ ոքի նեղութիւն տուի կամ վիշտ պատճառեցի, հաճոյ եղայ Աստուծոյ, ահա՛ երջանկութիւնը: ԳԵՂՈՒՅԻ

մատա 7 Կոթիկաց աստիճանի վրա գտնվածը —

Է մը մզկիտադնումը
 չվերա դառնա՝ ձիաբռնի սմաւդամբով ճշր մաւր մօ վճար
 վեցզեւ միտոմբ մալ, սմա իս ու պ մս սշխհզմ, Էտը —
 Էտանգրահակ իսպարաւտ սարքմալ մս զգաւ զմա եղաւտդրտտ
 Էտն Էտիսյրտմն իրտտոմ յով զմտրտի սմա վեցզեւ ոմալ
 ու Էտակի ոմոնով վիտաիսարաւտն ու սովտտն ԷՄ —

[illegible][illegible][illegible][illegible]

— ୯୫ —

— 34 —

խօսքը մտիկ կ'ըլեմ, իբր գաւակից պիտի սմբաստանուին: Ի՞նչ պիտի ըսէր արդեօք հայրս, եթէ գիտնար որ այս տեսակ անհաւատներու ընկերութեան մէջ կը գտնուիմ, այն որ սպաւորեց ինձ անհաւիս յարգել կարտինայր:

Ուստի, ինչպէս որ գիւրին է մտաբերել, տ՛Արգան-
եան չէր համարձակեր խօսակցութեան մասնակից ըլ-
լալ․ չորս աչքով կը դիտէր, ուշադրութեամբ մտիկ
կ'ընէր, իր ձինց զգայարանքն արթուն պահելով
որ բառ մը չփախցնէ, և իր հօրը խորհուրդներուն
վրայ ունեցած վստահութեան հակառակ, իր յատուկ
ձաշակին և բնազգուսի բերմամբ՝ անցած դարձած
բաները գոյկուռ քան պարստեյու հակամէտ կ'երեւէր։

Բայց որովհետև Պ. Թ. Գրեվիլի պայտասկաններու խումբին մէջ բոլորովին օտարական մ'էր և առաջին անգամ կ'երևէր այն կողմերը, եկան հարցուցին իրեն թէ ինչ կ'ուզէ: Այն տեսն, տ'Արդանեան խոնարհաբար իր անունը ծանոյց, հայրենակից մ'ըջալը յայտնեց, և զինքը հարցոտվործող սենեկապանին ազգէց որ Պ. Թ. Գրեվիլէն քանի մը վայրկեանի համար ունէ կնգրութիւն մը խնդրել, սենեկապանը խոստացաւ կատարել իր խնդիրն:

Տ՛Արցախեանի առաջին զարմանքը փոքր ինչ փա-
րատելով, միջոց ունեցաւ ներկաներուն կերպաբանքն
ու նաղուստը գիտելու :

Սկսելիս եռանդուն ակումբին կեդրոնը կը գտնուէր բարձրահասակ և ամբարտաւան կերպարանքով հրացանակիր մը, որուն այլանդակ հանդերձն ամենուն ուշադրութիւնը կը գրաւէր։ Նոյն սպանուն զինուորական տատառովը (կախուկնա) ձեր հագած, որ պարտաւորիչ

: Վհրմբուհի մը տառեր

Եւ պոկտեխնոլոգիան պոկտառում մը վճռով հետեւ գործողութեան
պէջքներդ տուն մօ , մը խտակութիւն վարդեղ : Ոչնչումն
տուն , վարդեղի տառածագ : Դժգոյթմիլ չի պոկտեղի —

• յիշել պատմութեան իմ փոխութիւններս
 իմ պիտանքիս պիտի ' եւ զիստեղծութեանս
 'միջոցառման 'միջոց իմ իշտութիւնս —

— Թորոյտի վառարարական և հոգեբանական —

ՀԱՅԿԱՅԻՆ ԶԳԻՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՎԵՐԱԿԱՆԱԿՈՒՄԸ ԵՎ ԴՐԱՆԻ ԿԱՐԳԸ —

Հայտնում է, որ «Հայաստանի մեր վրեժը մոլորեց ասիականացիների մարտակցին քաղաքի մերձակայում» —

— հայտնում , որովհետև :

Հոս • ուղիմայ հիմմոմ ' Հոսմ վափն մճոմմն մժտվոյ —

Հայկական միջազգայնացումը և Եվրոպայի հետ կապերի
զարգացումը Եվրոպական խորհրդի միջոցով և Եվրոպական
խորհրդի հետ հարաբերությունների մոնիթորինգի միջոցով —

2. *di/mi/na, h*

[illegible]

— וְאֵלֶּיךָ יָשׁוּבִים וְאֵלֶּיךָ יִשְׁתָּחֲוּוּ וְאֵלֶּיךָ יִשְׁתָּחֲוּוּ וְאֵלֶּיךָ יִשְׁתָּחֲוּוּ —

Վերադառնալով Երևան, Գրիգորյանը հանդիպեց Գևորգյանին, որը համարում էր իր խոստովանությունը և խոսեց իր խնդիրների մասին:

— 88 —

— Արամի՛ն, բարեկամդ լմ՝, այս անգամ՝ անիրա-
ւա, ընդմիջեց Բորթոս. խեղացի երեսեւու տենչդ քեզ
սահմանէն դուրս կը հանէ. եթէ՛ Պ. տը Դրէվիլը ըսածդ
յսէր, չատ պիտի վշտանար:

— Միթէ՛ դա՞ն տալու ելեր ես , Բորթն'ս , գոհեց
Արամիւն , որուն անուշ աչքը՛ն մեջ կայծի նման բան մը
անցաւ :

— Սիրելիք խմ, հրապանակէր կամ աբբայ եղիւր։
Մին կամ միւսը․ բայց ոչ մին և միւսը միանգամայն,
յարեւց Բորթոս։ Գիտես թէ Աթոս անցած օր ըստ․ քեզի
թէ ամէն բանի մէջ քիթդ կը խտթես։ Ա՛հ, խընդ-
րեմ, չարդողինք, անօգուտ բան է, արդէն դիտես թէ
ի՛նչ պայման ունինք քու, Աթոսի և խմ մէջ։ Այո՛ւ,
տիկին Շէվրէօզի քեռաղջիկ՝ տիկին աը Պուստիբասի
տունը կ'երթաս, և ամենքը կ'ըսեն թէ նոյն կնկան
շնորհները կը վայելես։ Ո՛հ, Տէ՛ր Աստուած, երջանա-
կութիւնդ քեզի պահէ, քու դաղտնիքդ հարցնող չկայ,
խոհեմութիւնդ ամենուն յայտնի է։ Ա՛րդ, քանի որ
այդ տաքիւնութեան տէրն ես, ինչո՞ւ համար, խնդրեմ,
նոյն ոգւով չես վարուիւր նորին վեհափառութեան մաս-
ին, Ո՛վ որ կ'ուզէ և ի՛նչպէս որ կ'ուզէ, թո՛ղ թա-
գաւորին և կարտինալին միսը ծամէ․ բայց թագուհի՛ն
նուիրական է, և անոր խօսքն ընողը պէտք է որ լաւ
խօսի։

— Բարձրո՛ւ , ահա կ'իմացնեմ քեզ որ Նարսիսին պէս մեծամիտ ես , պատասխանեց Արամիւ . զխոսն ուր բարոյականը կ'առնեմ , և մինակ խօսքը մոլիկ կ'ընեմ : Իսկ դու , սիրելիս , դու խիստ փառասուր կամար մը ունիս և բարոյականի մասին շատ վարժ չես : Արքայ պիտի ըլլամ , երբ յարմար դատեմ . առ այժմ՝ ճշպօղ-

ԿԱՐԵՒՈՐ ԳԻՏԵԼԻՔ

ՌՐԶՍՓ ՀԱՏՈՐՆԵՐ ԿԵ ԿԱՐԵՒՆԱԿԻՆ ԲԱՐԻՂԻ ՂԵՍԱՌ ՄԱՍԵՆԱՐԱՆՆԵՐԻ :

Մատ . Աղղային	3,000,000
» Նաւարանի	725,000
» Էնդիւզիւ ար Ֆրանսի	650,000
» Սէն Ժընըվիէյ	500,000
» Պատմակ . Բարիլ յարգարի	400,000
» Պատգամաւորայ Ժողովոյ	300,000
» Բարձր . Վարժարանաւոր	275,000
» Մագարին	250,000
» Պատերազմ . Նախարարութ .	200,000
» Ծերակոյտի	150,000
» Բժշկական Վարժարանի	150,000
» Ծովային Նախարարութ .	130,000
» Աշխարհագր . Ընկ .	100,000
» Բոյսնիական	100,000

* * *

ԱԿԱՄԱՆԻ ՌԵԶԱՐԻ ԿԱՆՈՒՄ Ե ԿԱՐԵ .
— Աշխարհագր . պիտ թագաւորական Ընդիւզիւնն հաշուած է որ , Հնդկաստանի ցարդ արտադրած է 2000 քիլոկրամ , և հարաւային Աֆրիկէ , որ ալամանդի հանքերու կողմանէ աշխարհի ամէնէն հարուստ երկիրն է , քառասուն տարիէ ի վեր արտադրած է 34,000 քիլոկրամ ալամանդ :

Գումար՝ 36.000 քիլոկրամ : Այս քանակութիւնը կը համապատասխանէ , երեսուն տարիէ ի վեր վաճառման գիններուն միջինին վրայ հաշուելով , 38 միլիոն ֆրանքի :

ՔԱՆԻ ՄԸ ԽՐԱՏՆԵՐ

ԿԱՏՈՒԻ ԶԱԳԵՐԸ ՄԵԾՅՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Կատունները ընդհանրապէս երեք կամ չորս ձագ կը բերեն : Երբեմն չինգ , վեց , մինչև ութ ձագ բերողներ կան : Պէտք է հանդիստ թողուլ մայրը միջին աստիճան տարութիւնով տեղ մը , քորջերով կամ թուղթի կտորներով լեցուն կողովի մը կամ սնուցի մը մէջ :

Մայր կատուն պէտք է կատարելապէս հանգստաւէտ պայմաններու մէջ գրգռել . սնունդը պէտք է ստատ ըլլայ , երկու կամ երեք յուսկուածական ճաշերով ի միատին . պէտք է կերցնել հացի հետ փշուած ձուկ կամ կարագի մէջ եփած և կտրուած թոք և կամ սնուցիլ խմորեղէններ :

Իբրեւ բմպելի , պէտք է մայր կատուն տրամադրութեանը տակ գնել մարութ ջուր՝ եփած քիչ մը կաթի հետ խառնուած :

Չաղուկները դոց աչքերով աշխարհ կուզան , զորս կը բանան ընդհանրապէս չինդերորդ օրը , և կը սկսին կաթ ուտել :



ՎԱՅՐԱՄ ՍԻՋԵՆԻՃԵԱՆ

Գնում , Վաճառում եւ Նորոգութիւն Ինքնաշարժերու (Օթօ)

Մի՛ գներ Օթօ , մի՛ ծախեր Օթօյ , առանց նախապէս մեզ տեսնելու , եթէ կ'ուզես շահաւոր դորձ կատարել : — Վրճարման գիւրութիւններ : — Միտու պատրաստ զանազան քամիօններ :

Հասցէ . — Բերա , Բանկալիի Համամ , Սալաի փողոց , Թիւ 1 :

ԾԱԽՈՒ ԳԵՏԻՆ

Բերա , Բանկալիի , Պիլէզիկէի փողոց , Պարութհանէ ճատտէսի , ծախու գետին մը կայ՝ 8 կանդուն երեսով , և 26 ու կէս կանդուն խորութիւնով : Դիմել Հարպիէ , Չինիլի բաղնիքին կից մանիֆաթուրաճի Յովսէփ Էֆէնտիին : 2—3

* * *

Ֆէրիզիւլ , Գուլուլու Պալ էօն ճատտէսի , 282 կանդուն գետինը , որ ունի 7 կանդուն երես և 40 կանդուն խորութիւն , ծախու է : Դիմել Փալազաշեան Գրատուն , Բերա , Գալբրատան Փողոց , Թիւ 171 : 2—3

2—3

— 26 —

ԱՂՔԱՏ . — Մեր հայրը : Չգիտեմ ի՞նչ պատճառաւ այս կողմը կ'ուզէ զալ : Տունէն շատ քիչ անդամ դուրս կ'ելնէ . միայն կիրակի օրերը եւ մեծ տօներուն դուրս կ'ելնէ և եկեղեցի կ'երթայ : Ո՛հ , չըլլայ թէ չափազանց ուրախութիւնը փրատ պատճառէ իրեն :

ԱՄԱՐԳՍԵԱՆ . — Շիտակ է ըսածդ , սիրելի՛ եղբայրս : Հակառակ ջերմ փափագիս , չեմ կրնար զրկել զանիկայ՝ այսպիսի անակնկալ գէպքի մը առաջուց զանիկայ չը պատրաստած : Ես մինչեւ իսկ ահաւասիկ կը դողամ կոր չափազանց ուրախութենէս : Հապա միւնոյն ուրախութիւնը ի՞նչ ներդրածութիւն պիտի ընէ տարիներու բեռին տակ անոր հալած մաշած մարմինին վրայ : (Աչերը դէպ ի հօր կը դարձնէ :) Բարի ծնողքս , մաքէդ չանցնիր որ արդէն քու կրտսեր զակիկ մօտն ես : Ի՞նչ պատուական ծերունի է , ի՞նչպէս բարի է և յարգանքի արժանի :

ԱՂՔԱՏ . — Ուրախ եմ որ դու վերջապէս մեզ չնորհուեցար , ո՛չ այնչափ ինձ համար , որչափ հօրս համար :

ԱՄԱՐԳՍԵԱՆ . — Հայրիկը կը մօտենայ . սա թուփին ետեւն է արդէն : Երթանք և մտածենք թէ ի՞նչ կերպով յայտնենք անոր՝ այս ուրախալի լուրը : (Երկուքն ի միասին դուրս կ'ելնեն :)

— 27 —

ՏԵՍԻԼ ԺԱ .

ԾԵՐՈՒՆԻՆ ՍԱՐԳԻՍ ԵՒ ՄԱՐԻԱՄ

(Սարգսի - նայր՝ Սարգսեանի - ներմալ մաղերը ուտելու վրայ ցուած են : Հազուսը խեղճ է , բայց մախուր : Ծերունին գաւազանի վրայ կոթնած է :)

ՍԱՐԳԻՍ . — Ես յոգնեցայ , ուժասպառ եղայ : Այս նստարանին վրայ կը հանգստանամ քիչ մը : Սի՛ն , եթէ տեսնէի ճանապարհորդ պարոնը :

ՄԱՐԻԱՄ . — Անհանգիստ մի՛ ըլլաք . անոր կառքը կուրեր է , իսկ մեր դարբինը շատ ծոյլ է . կ'երեւայ որ անիկայ ո՛չ այսօր և ո՛չ ալ վաղն առաւօտ պիտի կրնայ նորոգութիւնն աւարտել :

ՍԱՐԳԻՍ . — Ես պէտք է խօսիմ այդ պարոնին հետ : Ի՞նչպէս եղեր է որ բաժակ մը ջուրի համար ոսկի մը տուեր է , ոսկի մը որով կարելի է ամբողջ տակաւ մը գինի գնել . անշուշտ սխալեր է : Բարի պարոնը այդ դրամը քեզի տուեր է , առանց վրան նայելու :

ՄԱՐԻԱՄ . — Կարելի է : Ես չգիտէի թէ ի՞նչ կ'արժէր այդ դրամը . եթէ ո՛չ , ես իրեն կը հարցնէի թէ արդեօք չի՞ սխալիր : Կ'երեւայ որ շատ նշանաւոր հարուստ մարդ մըն է : Անոր պէս մարդ

ՃԵԴՈՒՄ ՄԸ ԵՒ ՀԱՐՑՈՒՄ ՄԸ

Անցեալ անգամ գրած էինք թէ Տեղապահը՝ Պարգեւ վրդ. ի կտակած 230 անգլ. ոսկիէն միայն 500 թրֆ. ոսկի տուած է Խաւսպետի Թաղ. Խորհուրդին, որ սպմ իր անկապտելի իրաւունքն եղող մնացեալ 2000 ոսկւոյ չափ գումարն եւս կը պահանջէ, հոգալու համար եկեղեցիին եւ վարժարանին անյետաձգելի պէտքերն :

Իրագել ազգային մը մեզ կը հաւորդէ՝ իբր հեղում թէ, 500 թրֆ. ոսկի տրուած ըլլալը սխալ է. 500 ոսկիի ընկալագիր տուուած, բայց 230 ոսկի միայն վճարուած է, եւ այսպէս ալ արձանագրուած է տուարներուն մէջ, թաղականներու ստորագրութեան ներքեւ : Թաղ. Խորհուրդին սխալուած է եղեր՝ գէտէն գտնուած դրամի մը պէս՝ ընդունելու այդ 230 ոսկիին, կարենալ վճարելու համար կալուածական *անյետաձգելի* տուրքերն :

Ուրեմն անցեալ անգամ սխալ

գրեք եւնք թէ, 230 անգլ. ոսկիին տեղ՝ 500 թրֆ. ոսկի վճարուեք է. պէտք է եղեր գրել թէ 230 անգլ. ոսկիին տեղ՝ 230 թրֆ. ոսկի վճարուեք է : Տարբերութիւնն ա՛յդքան աննշա՛ն է, որ Քննիչ Յանձնաժողովը չէ ուզած այս խնդրով ալ զբաղիլ :

Բաց աստի, կը զուրցուի նաեւ թէ, Տեղապահ եւ Մասիչեան 700 ոսկիի գումար մ'ալ գանձեք եւ Խաւսպետին, իբր ներկայ եւ յառաջիկայ ֆանի մը տարիներու *գանձելոյի* տուրք : Ասոյց է՝ այս, եւ ի՞նչ պարագայներու մէջ գանձուած է : Թաղ. Խորհուրդը կը հստակ լուսարանել խնդիրը :

ՀԱՐՑՈՒԱՆ ՕՐԱՑՈՅՑԸ

ՅՈՒՆԻՍ 21—27

- 21 Եւ. Դ. օր պահոց Վարդավառի :
 22 Ուր. Ե. » » »
 23 Շք. Յիւ. Տաղ. հնոյ եւ Տօն հորոյս :
 24 Կիր. Վարդավառ : Տօն ալլակ. Տօն.
 25 Իւ. Բ. օր Վարդ. Հարսանիք :
 26 Գւ. Դ. » »
 27 Դւ. Պանի :

ՕՐԱՆԱԽՈՐԴԱՅԻՆ

ՎԻՃԱԿԱԶԱՆՈՒԹԵԱՆ

Ամենէն բաղդատոր թիւերը կը ծախուին Փարագաշեան Գրաստան մէջ : Ձեր տոմսակները Փարագաշեան Գրաստանէն գնեցէք, եթէ չէք ուզեր բաղդատորի ըլլալ :

Փարագաշեան Գրաստան ո՛րը ըլլալը զիտէք. Բերա, Թիւնէլին կողմերը, Այլթընճը տալիրէ, Գապրիստան փողոց, Թիւ 171 :

Հարստանալու առիթը մի՛ կորսնցընէք : Փոխանցէ՛ք օգտուիլ :

Փարագաշեան Գրաստանէն մինչեւ հիմա ծախուած զրեթէ բոլոր թիւերն ալ շահեցան : Դուք ալ շահելու մեծապէս հաւանականութիւնը պիտի ունենաք, եթէ ձեր տոմսակները զրեցէք Փարագաշեան Գրաստանէն :

ՏՊԱԳՐ 3. Գ. ՓԱՍՏԱՆԵԱՆ

— 28 —

Ես դեռ չեմ տեսած : Երկու հազուաւ հազած է, մէկը միւսին վրայէն. ասիկայ շատ զարմացուց զիս : Երբ հազուաւին մէկը բացաւ, կուրծքին վրայ խաչ տեսայ :

ՍԱՐԳԻՍ. — Բա՛հ . . . բայց ո՛վ ալ ըլլայ, մեր խիղճը թող չի տար որ անոր զբամը պահենք : Ես այս ճերմակ մագերուս վրայ ամօթ չը պիտի կրեմ, զուէն ալ քու վարդապոյն այտերուդ վրայ : Իրեն տանք իր ոսկին : Աշխարհի վրայ ո՛չ մէկ բանի հետ պէտք է փոխել ազնուութիւնը :

ՄԱՐԻՍԱ. — Իբաւ է, մինչեւ իսկ ոսկիէ լեռնեղու հետ : (Չորս կողմը կը նայի) : Արդեօք ո՛ւր գնաց այն պարոնը : Ես կ'երթամ եւ կ'աշխատեմ զոնեղ զինքը (կ'երթայ) :

ՏԵՍԻԼ ԺԲ.

Ա.Ղ.ՔԱՏ ԵՒ ՍԱՐԳԻՍ

Ա.Ղ.ՔԱՏ. — Հայրիկ, ձեզի մխիթարական լուր մը պիտի տամ : Ես առողջացայ ա՛լ. հիւանդութիւնս անցաւ. փա՛ռք Աստուծոյ, ես ալ բոլորովին ուրիշ մարդ եղայ : Ա՛լ խիղճս չի տանջեր զիս : Խնդրեմ, ուշագործութիւնով երեսոս նայեցէ՛ք :

ՍԱՐԳԻՍ. — Ճիշդ է. աչքերուդ մէջ ուրախութիւն կը փայլի. յայտնի կ'երեւի լծէ աստղ-

— 25 —

Ա.Ղ.ՔԱՏ (ծուկ չոքելով). — Եղբայր, սիրելի եղբայր, ներէ՛ ինձ. կ'ազաչեմ ոտքերուդ տակ . . . ներէ՛ ինձ :

ՍԱՐԳՍԵԱՆ (վեր վերցնելով զանիկայ). — Ոտքի ե՛լ, գիրկս եկո՛ւր : Մոռնանք անցածը, ցաւը եւ տխրութիւնը : Աստուած ամէն բան ազէկ տնօրինեց : Դժբաղդութենէն բարեբաղդութիւն յառաջ բերաւ : (Սիրով կը համբուրէ եղբայրը) : Որքա՛ն ուրախութիւն է ինձ համար՝ քեզ տեսնելը :

Ա.Ղ.ՔԱՏ. — Ո՛հ, որչա՛փ բարի ես : Բու գըրկիդ մէջ նոր կեանք կ'առնեմ ես : Ո՛հ, եթէ գիտնայիր լծէ ես ի՞նչպէս կ'ողբայի իմ վատ արարքս . . .

ՍԱՐԳՍԵԱՆ. — Բաւական է. ա՛լ չի խօսինք այս մասին : Ես զքեզ գտայ. զու գիտ կը տեսնես : Դոհութիւն եւ փառք տանք Աստուծոյ : Բայց . . . հարցնելու չեմ համարձակիր . . . արդեօք հայրս ո՞ղջ է :

Ա.Ղ.ՔԱՏ. — Ողջ է, բայց կ'ապրի վշտի եւ աղքատութեան մէջ :

ՍԱՐԳՍԵԱՆ. — Ո՞ղջ է. փա՛ռք Աստուծոյ : Ծուռով քովս երթանք, երթա՛նք հայրենի խրճիթը :

Ա.Ղ.ՔԱՏ (ցուցնելով). — Ահա՛ ան ալ հոս կուգայ :

ՍԱՐԳՍԵԱՆ. — Ո՞վ :